

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Հաշվետվություն 2017 թ.
Երրորդ եռամսյակի համար

Սույն հաշվետվությունն ամփոփում է 2017 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսերին Կրթության գերազանցության ազգային ծրագրի շրջանակում իրականացված աշխատանքները և հիմնական ձեռքբերումները:

Եռամսյակի հիմնական ձեռքբերումները

1. Շարունակվեցին 2018 թ. ավարտական քննական նյութերի մշակման աշխատանքները:
2. Շարունակվեցին 2018 թ. ԱԲ-ի ավագ դպրոցների ընդունելության քննությունների մշակման աշխատանքները:
3. Շարունակվեցին բանակցություններն արտասահմանյան համալսարանների հետ ԱԲ-ի հավաստագրի միջազգային ճանաչման նպատակով:
4. Պաշտոնապես մեկնարկեց Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագիրը:
5. Շարունակվեցին «Արարատյան բակալավրիատ» կրթական ծրագրի՝ ՀՀ մարզերի հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում ներդրման ծրագրի մշակման աշխատանքները:
6. Շարունակվեցին Արարատյան բակալավրիատի դպրոցների ղեկավար կազմի զարգացման ծրագրի մշակման աշխատանքները:
7. Շարունակվեցին անհատական այցերն այն դպրոցներ, որոնք կարող են հավաստագրվել որպես ԱԲ-ի դպրոց՝ 2019 թվականից սկսած:

Բովանդակություն

Հայկական կրթական լավագույն ավանդների ու ժամանակակից կրթության առաջատար փորձի հիման վրա ստեղծված և սովորելու մրցունակ համակարգի ձևավորում

Ուսուցիչների զարգացման և հավաստագրման ծրագրի մշակում

Գիտելիքի տարածման և լավագույն փորձի փոխանակման արդյունավետ հարթակի ստեղծում և ներդրում

Հապավումներ

ԿԳԱԾ Կրթության գերազանցության ազգային ծրագիր

ԱԲ Արարատյան բակալավրիատ

ԱԲԲԿ Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

ԼՀՔ Լոնդոնի համալսարանական քոլեջ (University College London)

ԿԳՆ Կրթության և գիտության նախարարություն

ՔԳՄԿ Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոն (Cambridge Assessment International Education, Cambridge University)

ՄԲ ՃՀԱԳ Մեծ Բրիտանիայի ճանաչման և համեմատության ազգային գործակալություն (UK NARIC)

ՀՔԸԾ «Համալսարանների և քոլեջների ընդունելությունների ծառայություն» կազմակերպություն (UCAS), Միացյալ Թագավորության բուհական ընդունելության միասնական համակարգ

Կրթության գերազանցության ազգային ծրագիրը՝ համառոտ

Կրթության գերազանցության ազգային ծրագիրը Հայաստանի հանրակրթության որակի բարձրացման և համակարգային բարեփոխումների իրականացման նախաձեռնություն է:

ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Ձևավորել սովորելու միջազգայնորեն ճանաչելի և մրցունակ համակարգ՝ հայկական կրթական լավագույն ավանդների և ժամանակակից կրթության առաջատար փորձի հիման վրա
- Բացահայտել և խրախուսել լավագույն արդյունքներ դրսևորած ուսուցիչներին, նպաստել նրանց մասնագիտական զարգացմանը, արդյունավետ կերպով օգտագործել ուսուցչական ռեսուրսը և լավագույն մարդկային ռեսուրսն ուղղորդել դեպի դպրոց
- Խթանել դպրոցների ինստիտուցիոնալ զարգացումը

Իրականացման գործիք՝ «Արարատյան բակալավրիատ» համակարգ

Նախաձեռնողներ և իրականացնողներ՝ «Այբ» կրթական հիմնադրամ, ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Միջազգային գործընկերներ՝ Զեմբրիջի համալսարանի «Զեմբրիջի միջազգային քննություններ» կենտրոն և Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտ

Հայկական կրթական լավագույն ավանդների ու ժամանակակից կրթության առաջատար փորձի հիման վրա ստեղծված և սովորելու մրցունակ համակարգի ձևավորում

2017 թվականի երրորդ եռամսյակում կրթության գերազանցության ազգային ծրագրի իրագործման շրջանակում շարունակվել են Արարատյան բակալավրիատի աշխատանքները հետևյալ հիմնական ուղղություններով՝

1. Արարատյան բակալավրիատի 2016-2017 ուստարվա շրջանավարտների ընդունելությունն ՀՀ և օտարերկրյա բուհեր.
2. Արարատյան բակալավրիատի ավարտական և բուհական ընդունելության քննությունների ստուգման զեկույցների կազմում.
3. բանակցություններ Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի հետ՝ 2017-2018 թթ. ծառայությունների մատուցման պայմանագրի շուրջ.
4. ԱԲ-ի 2018 թ. ավարտական քննական նյութերի մշակման աշխատանքների շարունակում.
5. ԱԲ-ի ավագ դպրոցների ընդունելության քննությունների մշակման աշխատանքների շարունակում.
6. 2019 թ. ավարտական քննությունների 1-ին բաղադրիչի՝ բնական գիտությունների դեպքում ընտրովի պատասխանով հարցերի, մաթեմատիկայի դեպքում մաքուր մաթեմատիկայի հարցերի կազմում.
7. տերմինների բառարանների կազմում քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն և մաթեմատիկա առարկաների համար.
8. քննական նյութերում հաճախ հանդիպող հրահանգիչ բառերի ցանկի կազմում.
9. բանակցություններ արտասահմանյան համալսարանների հետ. ԱԲ-ի հավաստագրի միջազգային ճանաչման աշխատանքների շարունակում.
10. Արարատյան բակալավրիատի ավելի ամբողջական ներկայացում UCAS-ում.
11. ԱԲ-ի քննություններով բուհ ընդունվելու կարգի վերամշակման մեկնարկ.
12. հեռաժողովի անցկացում Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի հետ.
13. «հայոց պատմություն» առարկայի ծրագրի լրամշակման աշխատանքներ:

1. Արարատյան բակալավրիատի 2016-2017 ուստարվա շրջանավարտների ընդունելությունն ՀՀ և օտարերկրյա բուհեր

Ինչպես նշված է կրթության գերազանցության ազգային ծրագրի երկրորդ եռամսյակային հաշվետվության մեջ, ԱԲ-ի ավարտական և բուհական ընդունելության քննություններն անցկացվեցին հունիսի 1-14-ը: Բուհական ընդունելության քննություններին մասնակցեց Արարատյան բակալավրիատն առաջարկող առաջին դպրոցի՝ «Այբ» ավագ դպրոցի 36 աշակերտ (12-րդ դասարանցի):

Քննական աշխատանքների ստուգման ու գնահատման գործընթացը տևեց 25 օր: Գնահատման ավարտից հետո տեղի ունեցավ հեռաժողով Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի գնահատման չափանիշների և որակի ապահովման տնօրեն Անտոնի Դաուսոնի, գնահատման ավագ խորհրդատու Անաբել Քրիդլի և գնահատման մասով ծրագրերի տնօրեն Դեն Բրեյի և ԱԲ-ի քննական կենտրոնի մասնագետների մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին և հաստատվեցին առաջարկվող գնահատականները:

Ինչպես անցած տարի, այս տարի ևս գնահատման համար ԱԲ-ի աշակերտների վաստակած միավորները չափվել են այն սանդղակով, որով չափվել են աշխարհի 160 երկրներում Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի անցկացրած նույն քննությունների արդյունքները: Գնահատականները սահմանվել են համապատասխան շեմերով:

Աշակերտների քննական աշխատանքների ստուգումից ու գնահատումից հետո ԱԲ-ի ընդունող հանձնաժողովը ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ մշակված և ըստ կառավարության որոշման հաստատված կարգի հիման վրա հուլիսին ուսումնասիրեց «Արարատյան բակալավրիատ» ծրագրով դիմորդների դիմումները և ընդհանուր որոշման հիման վրա բաշխեց 2017-18 թթ. ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում և անվճար ու վճարովի տեղերում:

ԱԲ-ի այն շրջանավարտները, որ ուսանում են ՀՀ պետական բուհերում, հիմնականում ընդունվել են Երևանի պետական համալսարան (ԵՊՀ) և Երևանի պետական բժշկական համալսարան (ԵՊԲՀ):

Հայաստանյան և օտարերկրյա բուհեր, որտեղ ընդունվել են Արարատյան բակալավրիատի շրջանավարտները

Բուհեր Հայաստանում	Բուհեր արտասահմանում
<ul style="list-style-type: none"> • Երևանի պետական համալսարան • Երևանի բժշկական համալսարան • Հայաստանի ամերիկյան համալսարան • Հայաստանի ֆրանսիական համալսարան • Երևանի թատրոնի և կինոյի ինստիտուտ 	<ul style="list-style-type: none"> • Մանդեր Փորտման Վուդվորդի քոլեջ • Սանկտ Պետերբուրգի պոլիտեխնիկական համալսարան (Ռուսաստան) • Մոսկվայի Բաումանի անվան պետական տեխնիկական համալսարան (Ռուսաստան) • Չարլզ համալսարան, Չեխիա (Charles University)

2. Արարատյան բակլավրիատի ավարտական և բուհական ընդունելության քննությունների ստուգման զեկույցների կազմում

2017 թ. ավարտական և բուհական ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա ԱԲ-ի քննական կենտրոնի 4 առարկաների մասնագետները հուլիսի 21-30-ը սկսեցին կազմել քննական աշխատանքները ստուգողների զեկույցները: Չեկույցների կազմման հիմնական նպատակն է տվյալ առարկաները դասավանդող ուսուցիչներին ներկայացնել քննական աշխատանքների վերլուծությունը, ստուգողների դիտարկումներն առանձին հարցերի վերաբերյալ և այս կամ այն թեմայի դասավանդման հետ կապված առաջարկները:

Այնուհետև օգոստոսի 15-29-ը ԱԲ-ի քննական կենտրոն հրավիրվեցին «Այբ» դպրոցի ուսուցիչները՝ քննարկելու 2017 թ. քննությունների արդյունքների հիման վրա քննական աշխատանքները ստուգողների կազմած զեկույցները: Հանդիպումներն անցկացվել են ըստ առարկաների, և բոլոր մասնակիցներին հնարավորություն է տրվել տեսնելու որոշ քննական աշխատանքներ, քննարկելու և վերլուծելու քննական արդյունքները: Չեկույցների Էլեկտրոնային տարբերակներն ուղարկվել են ուսուցիչներին՝ դասավանդման ընթացքում դրանց անդրադառնալու և խնդրահարույց թեմաներին Էլ ավելի շատ ուշադրություն դարձնելու նպատակով:

3. Բանակցություններ Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի հետ՝ 2017-2018 թթ. ծառայությունների մատուցման պայմանագրի շուրջ

Հուլիսի 15-20-ը բանակցություններ են տարվել Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի հետ համագործակցության շրջանակում 2017-2018 թթ. ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման շուրջ: Բանակցությունները վերաբերում էին Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի կողմից իրականացվող խորհրդատվության, վերապատրաստումների և տրամադրվող քննական նյութերի հետ կապված զարգացման փուլերին և արձանագրված առաջընթացին:

2017-2018 թթ. ծառայությունների մատուցման պայմանագիրը վերջնականացվեց Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի հետ սեպտեմբերին: Նախատեսվում է, որ այն կստորագրվի հոկտեմբերի առաջին կեսին, երբ Հայաստանում լինի Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության գործադիր տնօրեն Մայքլ ՕՍալիվանը:

4. ԱԲ-ի 2018 թ. ավարտական քննական կյուբերի մշակման աշխատանքների շարունակում

Օգոստոսի 1-31-ը Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնի մասնագետները սկսեցին 2018 թ. քննաշրջանի համար ԱԲ-ի ավարտական քննությունների քննական կյուբերի մշակման աշխատանքները:

Սեպտեմբերի 8-26-ը քննական տարբերակները խմբագրվեցին, ձևավորվեցին և ուղարկվեցին Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնին՝ հատուկ գաղտնի համակարգով:

5. ԱԲ-ի ավագ դպրոցների ընդունելության քննությունների մշակման աշխատանքների շարունակում

Սեպտեմբեր 1-30-ը Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնի առարկայական մասնագետները կազմել են 2018 թ. ԱԲ-ի ավագ դպրոցների ընդունելության քննական կյուբերը: Այս կյուբերը կազմվել են չորս առարկայից՝ մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն:

Հիշեցնենք, որ, 2018 թվականից սկսած, Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնն աշակերտների ընդունելության քննություններ կանցկացնի նաև ՀՀ մարզերի և Արցախի՝ ԱԲ-ի դպրոցների ցանցին միացած ավագ դպրոցներ ընդունվել ցանկացող աշակերտների համար:

6. 2019 թ. ավարտական քննությունների 1-ին բաղադրիչի՝ բնական գիտությունների դեպքում ընտրովի պատասխանով հարցերի, մաթեմատիկայի դեպքում՝ մաքուր մաթեմատիկայի հարցերի կազմում

Սեպտեմբերի 15-ին Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնի առարկայական մասնագետները սկսեցին անգլերենով կազմել 2019 թ. ավարտական քննությունների 1-ին բաղադրիչի հարցերը: Այնուհետև դրանք պետք է ներկայացվեն Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի մասնագետների վերանայմանը:

7. Տերմինների բառարանների կազմում քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն և մաթեմատիկա առարկաների համար

Օգոստոսի 1-10-ը ԱԲ-ի քննական կենտրոնի առարկայական մասնագետները կազմեցին 4 առարկաների (քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, մաթեմատիկա) համար տերմինների անգլերեն-հայերեն բառարաններ:

8. Զննական նյութերում հաճախ հանդիպող հրահանգիչ բառերի ցանկի կազմում

Սեպտեմբերի 1-10-ը Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնի առարկայական մասնագետներն անգլերենով կազմել են քննական նյութերում հաճախ հանդիպող հրահանգիչ բառերի ցանկ՝ համապատասխան բացատրություններով: Այնուհետև ողջ ցանկը թարգմանվել է հայերեն՝ անգլերեն տարբերակի հետ համեմատությամբ: Համեմատության արդյունքում ընտրվել են հայերենում իմաստով ամենամոտ տարբերակները:

Հրահանգիչ բառերը սահմանում են առաջադրանքի բարդության աստիճանը, այդ իսկ պատճառով խիստ կարևոր է, որ ուսուցիչներն ու աշակերտները հստակ հասկանան, թե կոնկրետ ինչպիսի պատասխան է ակնկալվում իրենցից (կարճ, երկար, վերլուծական, բացատրական և այլն) այս կամ այն հրահանգիչ բառի դեպքում: Հրահանգիչ բառերը վերջնական տեսքի բերվելուց հետո կտրամադրվեն ուսուցիչներին և աշակերտներին:

9. Բանակցությունների վարում արտասահմանյան համալսարանների հետ. ԱԲ-ի հավաստագրի միջազգային ճանաչման աշխատանքների շարունակում

ԱԲ-ի միջազգային ճանաչման գործընթացը շարունակական է, և աշխատանքներն իրականացվում են երկու ուղղությամբ՝ անմիջապես համալսարանների հետ և տվյալ երկրում գործող ակադեմիական ճանաչման մարմնի:

Այս եռամսյակում ևս շարունակվել են ԱԲ-ի հավաստագրի միջազգային ճանաչման ուղղված աշխատանքները:

ԱԲ-ի ճանաչմանն ուղղված աշխատանքներ անմիջապես համալսարանների հետ

Հուլիս-սեպտեմբեր ամիսներին բանակցություններ են ընթացել երեք համալսարանի հետ՝

- Բրիստոլի համալսարան (Անգլիա). բանակցությունների արդյունքում Բրիստոլի համալսարանը ճանաչել է ԱԲ-ի հավաստագիրը.

- Մանչեստրի համալսարան (Անգլիա). բանակցությունների արդյունքում Մանչեստրի համալսարանը ճանաչել է ԱԲ-ի հավաստագիրը.
- Վիեննայի համալսարան (Ավստրիա). Վիեննայի համալսարանի հետ աշխատանքները դեռ ընթացքի մեջ են:

Եվրոպայի (Անգլիա, Ավստրիա, Նիդեռլանդներ, Գերմանիա, ԱՄՆ) մի շարք բուհերում ԱԲ-ի հավաստագրի ճանաչման շուրջ աշխատանքները շարունակվում են:

ԱԲ-ի ճանաչմանն ուղղված աշխատանքներ տվյալ երկրում գործող ակադեմիական ճանաչման մարմնի հետ

ԱԲ-ի հավաստագրի ճանաչման աշխատանքը մեկնարկում է, երբ տվյալ բուհ դիմորդ է լինում, հետևաբար դիմորդների աճին զուգահեռ կաճի նաև այն բուհերի թիվը, որոնց հետ տարվում են ճանաչման աշխատանքներ: Որոշ երկրների դեպքում (Անգլիա, Գերմանիա, Նիդեռլանդներ) որակավորումների ճանաչման գործընթացում կարևոր է ոչ միայն կոնկրետ համալսարանի հետ առանձին աշխատանքը, այլ նաև տվյալ երկրում գործող ակադեմիական ճանաչման մարմնի հետ բանակցությունների վարումը, քանի որ այդ մարմնի կողմից որակավորման ճանաչումը խթանում և արագացնում է այդ որակավորման ճանաչումը տվյալ երկրի համալսարանների կողմից: Այս նպատակով, համալսարանների հետ առանձին աշխատանքի իրականացումից բացի, բանակցություններ են տարվում Գերմանիայի և Նիդեռլանդների որակավորումների փոխճանաչման գործակալությունների հետ:

10. Արարատյան բակալավրիատի ավելի ամբողջական ներկայացում UCAS-ում

Ինչպես նշված է Կրթության գերազանցության ազգային ծրագրի առաջին եռամսյակային հաշվետվության մեջ, մարտի սկզբին «Արարատյան բակալավրիատ» հայալեզու կրթական ծրագիրն ավելացվեց Միացյալ Թագավորության բուհական ընդունելության միասնական համակարգում «Համալսարանների և քոլեջների ընդունելությունների ծառայություն» (ՀԲԸԾ, UCAS) կազմակերպության օտարերկրյա միջազգային որակավորումների ցանկում Միջազգային բակալավրիատի (International Baccalaureate), Եվրոպական բակալավրիատի (European Baccalaureate) և համաշխարհային մակարդակով այլ առաջատար կրթական որակավորումների շարքում, ինչը մեծ ձեռքբերում է:

Իսկ արդեն երրորդ եռամսյակում օգոստոսին, UCAS համակարգի որակավորումների ցանկում ` «Արարատյան բակալավրիատ» որակավորման տակ, ավելացվել են ԱԲ ծրագրով դասավանդվող բոլոր առարկաները` ստանդարտ և խորացված մակարդակով, ինչը ամբողջական պատկերացում է տալիս ԱԲ-ի մասին:

11. ԱԲ-ի քննություններով բուհ ընդունվելու կարգի վերամշակման մեկնարկ

Մեկնարկել է ԱԲ-ի քննություններով բուհ ընդունվելու կարգի վերամշակումը: Այս նպատակով կատարվել են մի շարք աշխատանքներ, այդ թվում ուսումնասիրվել է ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը, դուրս է բերվել ԱԲ-ի քննություններով և պետական ավարտական, միասնական, կենտրոնացված և միջհամալսարանական քննություններով բուհ ընդունվելու կարգերի տարբերությունը և այլն:

12. Հեռաժողովի անցկացում Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի հետ

Այս եռամսյակում Արարատյան բակալավրիատի միջազգային ճանաչման շրջանակում տեղի է ունեցել մեկ հեռաժողով, որի ընթացքում

1. ամփոփվել են նախորդ ամիսներին կատարված աշխատանքները.
2. քննարկվել է Լոյդմբերին Միջազգային դպրոցների խորհրդի (Council of International School) գիտաժողովի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը (գիտաժողովին ներկայացվելու են «Այբ» դպրոցը և Արարատյան բակալավրիատը).
- քննարկվել են ԱԲ-ի ճանաչման շուրջ Նիդեռլանդների որակավորումների միջազգային ճանաչման մարմնի՝ Nuffic-ի հետ ընթացիկ բանակցության արդյունքները. քննարկման ավարտին Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնը տրամադրել է խորհրդատվություն հետագա գործողությունների համար:

13. «Հայոց պատմություն» առարկայի ծրագրի լրամշակման աշխատանքներ

Ինչպես նշված է Կրթության գերազանցության ազգային ծրագրի 2017 թ. երկրորդ եռամսյակային հաշվետվության մեջ, երկրորդ եռամսյակում իրականացվել են աշխատանքներ «հայոց պատմություն» առարկայի ծրագրի լրամշակման և դասավանդման նոր մոտեցումների սահմանման նպատակով:

2017 թվականի երրորդ եռամսյակում ևս շարունակվել են Արարատյան բակալավրիատի «հայոց պատմություն» առարկայի ծրագրի լրամշակման աշխատանքները:

Ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագիր

Կրթության գերազանցության ազգային ծրագրի հիմնական նպատակներից են լավագույն արդյունքներ դրսևորած ուսուցիչներին բացահայտելն ու խրախուսելը, նրանց մասնագիտական զարգացմանը նպաստելը, ուսուցչական և լավագույն մարդկային ռեսուրսը դեպի դպրոց ուղղելը:

Այս առումով 2017 թվականի երրորդ եռամսյակում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի պաշտոնական մեկնարկ և երկօրյա ներածական հանդիպումներ.
2. Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի մասնակիցների առաջին դեմ առ դեմ հանդիպում.
3. Արարատյան բակալավրիատի փորձագետ վերապատրաստողների շարունակական զարգացում.
4. Արարատյան բակալավրիատի ուսուցիչների զարգացման և հավաստագրման ծրագրի հիմնական նյութերի թարգմանման-ստեղծման աշխատանքների շարունակում:

1. Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի պաշտոնական մեկնարկ, երկօրյա ներածական հանդիպումներ, առցանց խմբային քննարկումներ

Ծրագրի պաշտոնական մեկնարկ

Հուլիսի 4-ին պաշտոնապես մեկնարկեց Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագիրը՝ միջազգային չափանիշներին համապատասխան նոր ու լայնածավալ հայալեզու ծրագիր, որի առաջին փուլում ներառված է ՀՀ բոլոր մարզերի և Արցախի 110 ուսուցիչ:

Ծրագրի մեկնարկն ազդարարող միջոցառմանը, որն անցկացվեց «Այբ» դպրոցում, ներկա էին և խոսքով հանդես եկան ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը, Կրթության գերազանցության ազգային ծրագրի տնօրեն Տ. Մեսրոպ քնն. Արամյանը և Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Կենտրոնական վարչության անդամ, ՀԲԸՄ Հայաստանի նախագահ Վազգեն Յակոբյանը:

«Վերջապես սկսում ենք այս կարևոր գործընթացը: Երբ վերլուծում ենք աշխարհի լավագույն կրթական համակարգերը, տեսնում ենք մեկ կարևոր փաստ, այն է՝ ինչպիսի ուսուցիչ ունես, այդպիսին էլ քո կրթությունն է, քանի որ ուսուցիչն առանցքային դերակատարություն ունի կրթական գործընթացում: Մենք բոլորս սովորում ենք: Եվ վստահաբար այն ուսուցիչը, որը դադարում է սովորելուց, դադարում է ուսուցիչ լինելուց, իսկ սովորելը շատ լուրջ, ինքնակատարելագործման արվեստ է: Եվ մենք այսօր սկսում ենք այդպիսի գործընթաց», - բացման խոսքում ասաց ԿԳԱԾ-ի տնօրեն Տ. Մեսրոպ քին. Արամյանը:

ՀՀ ԿԳ փոխնախարար Դավիթ Սահակյանը շեշտադրեց ծրագրի ռազմավարական կարևորությունը պետության տեսանկյունից: «Կրթական բարեփոխումները թերևս ամենադժվար տրվող բարեփոխումներն են, քանի որ մենք գործ ունենք մարդկանց հետ: Մենք չենք կարող կրթության մեջ հրամանով իջեցնել, թե երեխաները կամ ուսուցիչներն ինչպես պետք է իրենց պահեն: Մեր կրթական համակարգում մենք այսօր ունենք մոտ 1400 տնօրեն, 370 000-ից ավելի աշակերտ, 37 000-ից ավելի ուսուցիչ և 500 000-ից ավելի ծնող: Եվ այս ամենի մեջ կա երկու խումբ, որոնք առաջնային են բարեփոխումների գործողությունների մեջ. դրանք տնօրեններն են և դպրոցի ուսուցիչները՝ այն մարդիկ, որոնք այս փոփոխությունները կյանքի են կոչում: Այդ իսկ պատճառով այն դերը, որ դուք ստանձնել եք, առաքելություն է: Դուք հիմա դեռ քիչ եք, սակայն դա նշանակում է, որ ձեր պատասխանատվությունը շատ ավելի մեծ է, քանի որ ձեր գործից և ձեր աշխատանքից կախված կլինի, թե ինչքանով արագ և ինչքան շատ մարդու հասանելի կլինի Արարատյան բակալավրիատը վաղը», - ասաց նա:

Այնուհետև խոսքով հանդես եկավ ՀԲԸՄ Հայաստանի նախագահ Վազգեն Յակուբյանը, որը, ողջունելով ներկաներին, ասաց ՀԲԸՄ-ի՝ ծրագրին ցուցաբերած աջակցության մասին: «Այն ներուժը, որ ստեղծվում է այստեղ՝ Հայաստանում, «Արարատյան բակալավրիատ» կրթական ծրագրի շնորհիվ, պետք է շատ հեռու գնա, դուրս գա ձեր դպրոցների, գյուղերի ու քաղաքների սահմաններից և հասնի մեր սփյուռքի կրթօջախներին, որպեսզի այնտեղի հայ երիտասարդներն էլ, ովքեր ցանկանում են լավ կրթություն ստանալ, գնան Արարատյան բակալավրիատի դպրոց, որտեղ կստանան համաաշխարհային մակարդակով ճանաչված հայալեզու կրթություն՝ հիմնված հայկական արժեքների վրա», - ասաց նա:

Մասնակիցների ներածական հանդիպումներ

Պաշտոնական մեկնարկից հետո սկսվեց ծրագրի մասնակիցների ուսումնառությունը՝ ներածական հանդիպումները, որոնց նպատակն էր՝ հնարավորություն ընձեռել մասնակիցներին ծանոթանալու նոր ձևավորվող ուսուցչական համայնքին՝ հետագա արդյունավետ համագործակցության նպատակով: Ներածական հանդիպումներին մասնակցել են նաև ԱԲ-ի թեկնածու դպրոցների տնօրենները:

Ներածական հանդիպումները բաղկացած էին երկու մասից: Առաջին մասը նվիրված էր ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի

բովանդակությունը, նպատակները և ընթացքը ներկայացնելուն, իսկ երկրորդ մասը՝ գործնական աշխատանքային հանդիպումներին, որոնք մշակվել էին ԱԲ-ի փորձագետ վերապատրաստողների կողմից: Ներածական հանդիպման երկրորդ մասում մասնակիցներն աշխատել են խմբերով՝ առավել արդյունավետ աշխատանքային հանդիպումներ ունենալու նպատակով:

Ներածական հանդիպումների հատուկ հյուրը Լոնդոնի համալսարանական քոլեջի (ԼՀՔ) Կրթության ինստիտուտի ավագ մասնագետ, դոկտոր Յացեկ Բրանտոն Էր, որ ժամանել էր Հայաստան անձամբ ողջունելու ծրագրի ընտրական փուլերը հաղթահարած մասնակիցներին և ներկա գտնվելու նրանց զարգացման դասընթացներին: Վերջինս այդ հանդիպումների ժամանակ կատարել է որոշակի դիտարկումներ և տրամադրել դրանք ԱԲ-ի փորձագետ վերապատրաստողներին՝ բնութագրական արձագանքի նպատակով:

Առցանց խմբային քննարկումներ ԱԲ-ի փորձագետ վերապատրաստողների հետ

Ներածական հանդիպումներին հաջորդել են մասնակիցների հետ ընթերցանության նյութերի և ակադեմիական հոդվածների առցանց խմբային քննարկումները: Յուրաքանչյուր քննարկումից հետո ԱԲ-ի փորձագետ վերապատրաստողները գրառումներ ու նշումներ են կատարել ընթերցանության նյութերի քննարկմանն իրենց խմբերի անդամների մասնակցության և պատրաստվածության վերաբերյալ, ինչի հիման վրա Էլ լրացվել են մասնակիցներին բնութագրական արձագանքի համար հատկացված համապատասխան թերթիկներ:

Մասնակիցներին, ովքեր ունեցել են բացթողումներ ներածական հանդիպումների կամ առցանց խմբային քննարկումների ընթացքում, Էլփոստի միջոցով տրվել է բնութագրական արձագանք՝ նրանց տեղեկացնելով այն քայլերի մասին, որոնք անհրաժեշտ է իրականացնել՝ համապատասխան բացթողումները լրացնելու նպատակով:

Հուլիսին շարունակվել են մասնակիցների կողմից մասնագիտական հոդվածների ընթերցանությունն ու առցանց խմբային քննարկումը: Այնուհետև բոլոր մասնակիցներին տրվել է բնութագրական արձագանք հուլիս ամսվա մասնագիտական հոդվածների առցանց խմբային քննարկումներին նրանց մասնակցության և պատրաստվածության վերաբերյալ:

Խմբային քննարկումներն իրականացվել են նաև սեպտեմբեր ամսին: Այսպիսով՝ հուլիս-սեպտեմբեր ամիսներին ԱԲ-ի 8 փորձագետ վերապատրաստողները ծրագրի մասնակիցների հետ անցկացրել են 168 առցանց խմբային քննարկում միջինում շաբաթական 3 անգամ: Այս ընթացքում քննարկվել է 7 մասնագիտական հոդված:

Օգոստոսին Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի մասնակիցներին ուղարկվել է հարցում, թե ինչ է նրանց

տալիս ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագիրը, մասնավորապես՝ խմբային քննարկումները: Հարցումն անցկացվել է անանուն:

«Խմբային քննարկումները նոր փուլ էին իմ մասնագիտական գործունեության մեջ: Մասնակիցների լայն աշխարհագրությունը, հողվածների թեմաների հաջող ընտրությունը օգնեցին ավելի խոր ըմբռնել քննարկվող հարցերը: Երբ աշխատանքային խնդիրներդ քննարկվում են այլ մարդկանց կողմից, որոնց համար այդ հարցերը նույնպես շատ կարևոր են, գիտակցում ես, թե որքան հետաքրքիր և կարևոր կարող է լինել քո առօրյա աշխատանքը: Խմբային քննարկումներին հնչած կարծիքներն օգնեցին ինձ հաղթահարել ինքնուրույն ուսումնառության ժամանակ ծագած դժվարություններն ու թյուրըմբռնումները: Դրանք ինձ վստահություն ներշնչեցին, որ մենակ չեմ և կողքիս ոչ թե պատահական մարդիկ են, այլ բարձր ինտելեկտով օժտված արհեստավարժ մանկավարժներ: Հնչեցին գործնական խորհուրդներ, որոնք կկիրառեմ աշխատանքիս մեջ: Անկասկած, հաշվի կառնեմ բոլոր դիտողությունները: Սպասում եմ հաջորդ խմբային քննարկումներին»:

«Խմբային առցանց հանդիպումներն անցնում են շատ հետաքրքիր, սիրով մասնակցում եմ ընթերցանության նյութերի քննարկմանը, ինչը զգալիորեն նպաստեց ծրագրի նկատմամբ իմ ունեցած հետաքրքրության աճին, և այս պահին չեմ տեսնում որևէ խոչընդոտ, որը կարող է ազդել քննարկումներին իմ արդյունավետ մասնակցության վրա: Ընթերցանության նյութերը բավականին հետաքրքիր են, արդիական, մտածելու տեղիք տվող»:

«Խմբային քննարկումներն օգնում են, որ նյութը նախապես ուսումնասիրես, մտածես այն բոլոր հարցադրումների մասին, որ տեղ են գտել տվյալ նյութի մեջ, կարողանաս ներկայացվելիք նյութը կապել սեփական փորձառության հետ: Խմբային քննարկումների արդյունքում ձեռք բերված գիտելիքներն օգնում են հարցերին նորովի նայել, դասի պլանները կազմելիս հաշվի առնել ներկայացում, կիրառում, ամփոփում ձևաչափը»:

2. Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի մասնակիցների առաջին դեմ առ դեմ հանդիպում

Սեպտեմբերի 16-17-ին Արարատյան բակալավրիատի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի մասնակիցներից 107-ը «Այբ» դպրոցում անցկացրեց առաջին դեմ առ դեմ հանդիպումը (մասնակիցների թվի փոփոխության մասին ավելի մանրամասն՝ էջ 19-ում):

Հանդիպումների ընթացքում անդրադարձ է կատարվել հետևյալ թեմաներին՝ պրոֆեսիոնալիզմ, ուսումնառության համընթաց պլանավորում, դասարանային գործունեության օրինակելի մոդել, ծանոթացում հարցադրումների մեթոդին, տնային աշխատանք և առաջադրանքների մշակում:

Դեմ առ դեմ հանդիպումներին մասնակցելու նպատակով կրկին Հայաստան Է ժամանել Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի ավագ մասնագետ, դոկտոր Յացեկ Բրանտը, որն աջակցություն, խորհրդատվություն և բնութագրական արձագանք է տրամադրել ԱԲ-ի փորձագետ վերապատրաստողներին:

ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագիրը լքած մասնակիցներ, պատճառներ և հիմնավորումներ

Ինչպես նշված է ԿԳԱԾ-ի երկրորդ եռամսյակային հաշվետվության մեջ, ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրի մասնակիցները հայտնի դարձան հունիսին: Հաղթահարելով ընտրության բոլոր փուլերը՝ ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման ծրագրում ընդգրկվելու հնարավորություն ստացավ 111 մասնակից, որոնցից 26-ը՝ պայմանական սկզբունքով՝ հարցազրույցի փուլի չափանիշները մասնակի բավարարելու պատճառով:

Հուլիս-սեպտեմբեր ամիսներին ծրագրի մասնակիցների թիվը նվազել է հինգով, և այսօր նրանց թիվը հասնում է **107**-ի: Ստորև ներկայացնում ենք մասնակիցների՝ ծրագրին մասնակցությունը չշարունակելու պատճառ-հիմնավորումները:

- *Գյումրու ակադեմիական վարժարանի* մաթեմատիկայի ուսուցիչ Գագիկ Սուքիասյանը հուլիսին հրաժարվել է ծրագրին մասնակցելուց՝ տեղեկանալով հարցազրույցի արդյունքների մասին:
- Հուլիսին *Գյումրու ակադեմիական վարժարանի* մաթեմատիկայի ուսուցիչ Արման Աթոյանն իր ցանկությամբ հրաժարվել է շարունակել ծրագրում իր մասնակցությունը:
- Օգոստոսին *Դիլիջանի կենտրոնական դպրոցի* ուսուցչուհի Սեդա Քոչարյանի հետ դադարեցվել է համագործակցությունը ծրագրի շրջանակում աշխատանքի նպատակով այլ երկիր նրա տեղափոխվելու պատճառով:
- Սեպտեմբերին *Կասպանի թիվ 2 ավագ դպրոցի* մաթեմատիկայի ուսուցիչ Աշոտ Մելիք-Փարսադանյանի հետ դադարեցվել է ծրագրի շրջանակում համագործակցությունը՝ մասնակցի ցանկությամբ և նրա ունեցած ծանրաբեռնվածության պատճառով:

3. ԱԲ-ի փորձագետ վերապատրաստողների շարունակական զարգացում

Հուլիսին կայացած ներածական հանդիպումների շրջանակում Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի ավագ մասնագետ, դոկտոր Յացեկ Բրանտը հանդիպում ունեցավ ԱԲ-ի փորձագետ վերապատրաստողների հետ: Հանդիպման հիմնական նպատակը ԱԲ-ի փորձագետ վերապատրաստողների զարգացման ծրագրի բովանդակության ու գնահատման չափանիշների ամբողջացումն էր, ինչպես նաև ուսուցիչների շարունակական զարգացման դրույթների դուրսբերումը:

4. ԱԲ-ի ուսուցիչների զարգացման և հավաստագրման ծրագրի հիմնական նյութերի թարգմանման-ստեղծման աշխատանքների շարունակում

2017 թ. երրորդ եռամսյակում շարունակվել է ԱԲ-ի ուսուցիչների զարգացման ծրագրի շրջանակում յուրաքանչյուր թեմայի համար պարտադիր ընթերցանության նյութերի (հիմնական նյութեր) թարգմանությունը: Այս գործընթացը մեկնարկել է 2016 թվականին: Այս եռամսյակում թարգմանվել է 9 հոդված, և այսօր թարգմանված հոդվածների թիվը հասնում է 49-ի:

Գիտելիքի տարածման և լավագույն փորձի փոխանակման արդյունավետ հարթակի ստեղծում և ներդրում

2017 թվականի երրորդ եռամսյակում շարունակվել են ՀՀ մարզերի հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում Արարատյան բակալավրիատի ներդրման ծրագրի մշակման աշխատանքները, մեկնարկել է ԱԲ-ի դպրոցների տնօրենների զարգացման ծրագրի մշակումը և շարունակվել են անհատական այցերն այն դպրոցներ, որոնք 2019 թվականից կարող են հավաստագրվել որպես Արարատյան բակալավրիատի դպրոց:

իրականացված հիմնական աշխատանքները ներառում են՝

1. «Արարատյան բակալավրիատ» կրթական ծրագրի՝ ՀՀ մարզերի հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում ներդրման ծրագրի մշակման աշխատանքների շարունակում.
2. ՀՀ մարզերի հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում ԱԲ-ի ներդրման ծրագրից բխող և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացվելիք հավելյալ փաստաթղթերի մշակման մեկնարկ.
3. ԱԲ-ի դպրոցների թեկնածության փուլի վերջնարդյունքների և կշիռների, ինչպես նաև թեկնածության փուլում գտնվող դպրոցների համար ուղեցույցների և կարգերի մշակում.
4. Արարատյան բակալավրիատի դպրոցների ղեկավար կազմի¹ զարգացման ծրագրի մշակման աշխատանքներ.
5. ԿԳԱԾ-ի դպրոցների զարգացման և համակարգման բաժնի մասնագետների անհատական այցեր այն դպրոցներ, որոնք կարող են հավաստագրվել որպես ԱԲ-ի դպրոց՝ 2019 թվականից սկսած:

1. «Արարատյան բակալավրիատ» կրթական ծրագրի՝ ՀՀ մարզերի հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում ներդրման ծրագրի մշակման աշխատանքների շարունակում.

Երրորդ եռամսյակի սկզբին ամփոփվել են ՀՀ կառավարությանը ներկայացվելիք՝ ԱԲ-ի ներդրման հետ կապված ծրագրի նախնական մշակման աշխատանքները, որից հետո՝

- հուլիսի 19-ին, ծրագիրը ներկայացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ նախնական ընթերցման.

¹ Ծրագիրը նախատեսված է ԱԲ-ի դպրոցների ինչպես տնօրենների, այնպես էլ փոխտնօրենների համար:

- հուլիսի 20-ին ծրագրի վերջնական տարբերակը և 2018-2020 թթ. ԱԲ-ի ներդրման նպատակով բյուջետային հավելումների նկարագիրը ներկայացվել է ՀՀ ԿԳ նախարարություն՝ համապատասխան գերատեսչություններում շրջանառելու համար, մասնավորապես՝ ՀՀ ֆինանսների և տարածքային կառավարման նախարարություններ:
- օգոստոսի երկրորդ կեսին ՀՀ ֆինանսների և տարածքային կառավարման նախարարություններից ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա, ՀՀ ԿԳ նախարարության ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքում, կատարվել են համապատասխան լրամշակումներ և ավելացումներ:
- սեպտեմբերի առաջին կեսին ծրագրի վերանայված տարբերակն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ առաջարկությունների և դիտարկումների ակնկալիքով:

Ակնկալվում է, որ չորրորդ եռամսյակում ՀՀ արդարադատության նախարարությունից ստացված առաջարկությունների և դիտարկումների հիման վրա ծրագիրը վերջնականապես կլրամշակվի և նույն եռամսյակում կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը:

2. ՀՀ մարզերի հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում ԱԲ-ի ներդրման ծրագրից բխող և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացվելիք հավելյալ փաստաթղթերի մշակման մեկնարկ

ՀՀ մարզերի հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում ԱԲ-ի ներդրման ծրագրի (որը ներկայացվելու է ՀՀ կառավարության հաստատմանը) մշակմանը զուգահեռ վերջնականացվել է ծրագրից բխող լրացուցիչ փաստաթղթերի ցանկը:

ԱԲ-ի ներդրման ծրագրից բխող լրացուցիչ փաստաթղթերի ցանկը ներառում է՝

1. դպրոցների և ուսուցիչների հավաստագրման հանձնաժողովների աշխատակարգերը.
2. դպրոցների և ուսուցիչների հավաստագրման հանձնաժողովների հաստատմանը ենթակա դպրոցների և ուսուցիչների ընտրության, թեկնածության և հավաստագրման փուլերի չափանիշներն ու այդ գործընթացները կարգավորող այլ փաստաթղթեր.
3. ԱԲ-ի դպրոցների հավաստագրման գործընթացի չափանիշներին մասնակի կամ ամբողջովին չբավարարած և մշտադիտարկման ենթակա դպրոցների վերահսկողության և մշտադիտարկման ուղղություններն ու չափանիշները.

4. դպրոցների թեկնածության և հավաստագրման փուլերի մեկնարկին դպրոցների հետ կնքվող պայմանագրերի ձևանմուշները.
5. ուսուցիչների մասնագիտական զարգացման և հավաստագրման փուլերի մեկնարկին ուսուցիչների հետ կնքվող պայմանագրերի ձևանմուշները.
6. ԱԲ-ի դպրոցների և ուսուցիչների վերահավաստագրման կարգերը, դիմում-հայտերը և քննման չափանիշները.
7. ԱԲ ծրագրով սովորել պատրաստվողների ընդունելության, տեղափոխման և ազատման կարգը.
8. ԱԲ-ի դպրոցների ֆինանսավորման կարգը:

Վերոնշյալ փաստաթղթերի գերակշիռ մասի մշակումը մեկնարկել է և նախատեսվում է ավարտել մինչև 2017 թ. դեկտեմբերի վերջը:

3. Թեկնածության փուլի վերջնարդյունքների և կշիռների, ինչպես նաև թեկնածության փուլում գտնվող դպրոցների համար ուղեցույցների և կարգերի մշակում

Մեկնարկել է դպրոցների թեկնածության փուլի վերջնարդյունքների և դրանց կշիռների², ինչպես նաև թեկնածության փուլում գտնվող դպրոցների համար ուղեցույցների և կարգերի մշակումը:

Թեկնածության փուլի հաղթահարման և ԱԲ-ի դպրոցի հավաստագիր ստանալու համար նախատեսված են հետևյալ վերջնարդյունքները՝

1. դպրոցների կառավարման մարմինների արդյունավետ գործունեություն, որը ներառում է ինչպես դպրոցի խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացում, այնպես էլ տնօրինության ղեկավարման և առաջնորդության հմտությունների զարգացում.
2. ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրով հավաստագրված ուսուցիչների առկայություն.

² ԱԲ-ի թեկնածության փուլի յուրաքանչյուր վերջնարդյունք ունի իր կշիռն ընդհանուրի մեջ, և եթե դպրոցը թեկնածության ժամանակահատվածում կարողանում է ապահովել թեկնածության վերջնարդյունքների երկու երրորդը, ապա դիտարկվում է տվյալ դպրոցին ԱԲ-ի հավաստագրի տրամադրման հարցը:

3. կրթական միջավայրի բարելավում, որը ներառում է ինչպես ֆիզիկական միջավայրի տարրերի բարելավում, այնպես էլ ներքին միջավայրի կանոնակարգում.
4. դպրոցի՝ որպես ակտիվ համայնքային կենտրոնի դերի բարձրացում:

Դպրոցների կառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների շրջանակում մեկնարկել է դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի (խորհրդի) գործունեության սկզբունքներն ամփոփող փաստաթղթի մշակումը: Վերջինս օրենքով և դպրոցի կանոնադրությամբ սահմանված խորհրդի ձևավորման կարգի, անդամների պարտավորությունների ու լիազորությունների հավելում է և սահմանում է այն հիմնադրույթներն ու սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվի ԱԲ-ի դպրոցի խորհուրդն իր գործունեությունը ծավալելիս:

Փաստաթղթի նախնական տարբերակն ուղարկվել է ԱԲ-ի թեկնածու 21 դպրոցների տնօրեններին՝ դիտարկումների ու մեկնաբանությունների համար, որպեսզի մշակված փաստաթուղթը դառնա գործնականորեն առավել կիրառելի: Այնուհետև ուղեցույցը մեկնաբանությունների հիման վրա կամբողջացվի և կշրջանառվի թեկնածու դպրոցների շրջանում խորհրդի հետագա աշխատանքները տվյալ փաստաթղթով կազմակերպելու համար:

Տնօրենների ղեկավարման և առաջնորդության հմտությունների զարգացման նպատակով մեկնարկել է ԱԲ-ի դպրոցների տնօրենների զարգացման ծրագրի մշակումը, որն իրականացվում է Էոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի հետ համագործակցությամբ (այս մասին ավելի մանրամասն՝ էջ 25-ում):

ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրով հավաստագրված ուսուցիչների առկայությունն ապահովելու նպատակով շարունակվում են ուսուցիչների դասընթացները (այս մասին ավելի մանրամասն՝ էջ 15-ում):

Կրթական միջավայրերի բարելավման նպատակով մեկնարկել է համապատասխան ուղեցույցների մշակումը, մասնավորապես՝ աշխատանքներ են իրականացվում առարկայական լաբորատորիաների նախագծման ուղեցույցի և անհրաժեշտ լաբորատոր սարքավորումների ու նյութերի փաստաթղթի մշակման ուղղությամբ: Այս աշխատանքները նախատեսվում է ավարտել և փաստաթուղթը հասանելի դարձնել չորրորդ եռամսյակում:

Կրթական միջավայրի բարելավումը նաև ենթադրում է դպրոցի ներքին մթնոլորտի կանոնակարգում: Դպրոցի ներքին աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար հստակեցվել է դպրոցին անհրաժեշտ կարգերի ցանկը:

Դպրոցի՝ որպես ակտիվ համայնքային կենտրոնի դերի բարձրացման նպատակով իրականացվել են տեղական և միջազգային փորձի մի շարք ուսումնասիրություններ,

որոնց արդյունքում նախատեսվում է մշակել դպրոցների ակտիվության ոլորտները և սկզբունքները սահմանող փաստաթուղթ:

4. Արարատյան բակալավրիատի դպրոցների ղեկավար կազմի³ զարգացման ծրագրի մշակման աշխատանքներ

Լոնդոնի համալսարանական քոլեջի (ԼՀՔ) Կրթության ինստիտուտի տնօրենների զարգացման և առաջնորդության ծրագրերի տնօրեն Ջոնաթան Դեյլի և խորհրդատու Թոնի Ռիչարդսոնի հունիսյան այցից հետո նրանց ուղարկվել են ԱԲ-ի թեկնածու դպրոցների տնօրենների հետ քննարկումների արդյունքները, ինչպես նաև ՀՀ կրթության ոլորտը կարգավորող մի շարք փաստաթղթեր ու հետազոտություններ՝ ավելի լայն պատկերացում կազմելու ՀՀ կրթության ոլորտի մասին:

Այնուհետև ԼՀՔ Կրթության ինստիտուտի մասնագետները ներկայացրել են գործողությունների ծրագրի նախնական առաջարկը, որը ներառում է համագործակցության շրջանակում իրականացվելիք աշխատանքներն ու դրանց ժամանակացույցը, ինչպես նաև տնօրենների զարգացման ծրագրի նախնական կառուցվածքը, որի վերաբերյալ կատարվել են դիտարկումներ և ավելացումներ:

Ծրագրի մշակման և տեղայնացման նպատակով սեպտեմբերին պայմանավորվածություն է ձեռք բերվել մասնագետների երկրորդ այցի վերաբերյալ, որի ուղղությամբ իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ: Այցի ընթացքում նախատեսվում են այցեր ԱԲ-ի թեկնածու դպրոցներ և խմբային հանդիպում-քննարկումներ ԱԲ-ի թեկնածու դպրոցների տնօրենների և ուսումնական գծով փոխտնօրենների հետ, ինչպես նաև հանդիպում ԿԳ նախարարության ներկայացուցիչների հետ:

5. Անհատական այցեր այն դպրոցներ, որոնք կարող են հավաստագրվել որպես ԱԲ-ի դպրոց՝ 2019 թվականից սկսած

Սեպտեմբերին շարունակվել են⁴ անհատական այցերն այն դպրոցներ, որոնք, ըստ կանխատեսումների, կարող են հավաստագրվել որպես Արարատյան բակալավրիատի դպրոց՝ 2019 թվականից սկսած: Այս նպատակով իրականացվել են այցեր մարզային 11 դպրոց Տավուշի, Արարատի, Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի, Լոռու, Գեղարքունիքի

³ Ծրագիրը նախատեսված է ԱԲ-ի դպրոցների ինչպես տնօրենների, այնպես էլ փոխտնօրենների համար:

⁴ Անհատական այցերն այն դպրոցներ, որոնք կարող են հավաստագրվել որպես ԱԲ-ի դպրոց 2019 թվականից սկսած, մեկնարկել էին դեռևս ս.թ. մայիսին, սակայն արձակուրդային շրջանի պատճառով այցերը հետաձգվեցին մինչև սեպտեմբեր: Մայիսին ԿԳԱԾ-ի թիմն այցելել է երկու դպրոց:

մարզերում: Այցերի նպատակն էր ամբողջական պատկեր ստանալ այս դպրոցների մասին, ծանոթանալ նրանց նպատակներին, կրթական մոտեցումներին, միջավայրին ու ավանդույթներին, բացահայտել այն ոլորտները, որոնք հետագա բարելավման կարիք ունեն և այլն: Երկժամյա հանդիպումներին յուրաքանչյուր դպրոցից մասնակցել են առնվազն 8 աշակերտ և 8 ուսուցիչ:

Այցերի ընթացքում պատասխանատուները՝

- իրականացրել են շրջայց դպրոցում ուշադրություն դարձնելով դպրոցի ընդհանուր պայմաններին և ջեռուցմանը, լաբորատորիաներին, սպորտի և հանդիսությունների դահլիճներին, սննդի ապահովման կետին և սանհանգույցներին.
- հանդիպել են ուսուցչական անձնակազմի հետ.
- հանդիպել են դպրոցի աշակերտների հետ (նախապես պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ աշակերտները լինեն տարբեր տարիքային խմբերից).
- հանդիպել և զրուցել են տնօրենի հետ:

Այցերի ընթացքում, ըստ անհրաժեշտության, դպրոցներից պահանջվել են նաև հավելյալ փաստաթղթեր, որոնք մշակվել և ակտիվորեն գործածվում են տվյալ դպրոցի կողմից:

Այցերի հիման վրա յուրաքանչյուր դպրոցի համար կազմվել են անհատական զեկույցներ: Ս. թ. Նոյեմբերին կսկսվի հարցազրույցների փուլը, երբ այս 13 դպրոցների ներկայացուցիչները կհանդիպեն «Արարատյան բակալավրիատ» ծրագրի թեկնածու դպրոցների ընտրության մրցութային հանձնաժողովի անդամների հետ: Հարցազրույցների փուլի ավարտին պարզ կլինի 2019 թվականից թեկնածության փուլը մեկնարկող դպրոցների ցանկը:

Արարատյան բակալավրիատի դպրոցների ընտրության մրցութային հանձնաժողովը կազմված է 5 անդամից: Դրանք են ՀՀ ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանը, ՀՀ ԿԳ փոխնախարար Դավիթ Սահակյանը, ՀՀ ՊՆ փոխնախարար, «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի փոխնախագահ Դավիթ Փախչանյանը, ՀՀ նախագահի խորհրդական, ԿԳԱԾ-ի ղեկավար Մեսրոպ քին. Արամյանը և ՀԲԸՄ Հայաստանի նախագահ, ՀԲԸՄ կենտրոնական վարչության անդամ Վազգեն Յակուբյանը:

Հիշեցնենք, որ ԱԲ-ին անդամակցելու գործընթացը կազմված է երեք հիմնական փուլից՝ դիմումի, թեկնածության և հավաստագրման: Դպրոցների հավաստագրման համար Էական նշանակություն կունենան դպրոցի՝ թեկնածության փուլում իրականացրած բարեփոխումները՝ ԱԲ-ի ծրագրի պահանջներին լիովին համապատասխանելու ուղղությամբ:

Արարատյան բակալավրիատին ՀՀ մարզերի և Ստեփանակերտի դպրոցների միանալու գործընթացը մեկնարկել է 2016 թվականին: Ծրագրին անդամակցելու առաջին՝ դիմում-հայտերի փուլն ավարտվել է 2017 թվականի հունվարի 27-ին ՀՀ մարզերի դպրոցների

համար և փետրվարի 20-ին՝ Ստեփանակերտի դպրոցների համար: Արդյունքում ծրագրին միանալու դիմում-հայտ է ներկայացրել ՀՀ մարզերի և Ստեփանակերտի՝ ավագ բաղադրիչ ունեցող **55 դպրոց** (29 ավագ, 23 միջնակարգ դպրոց և 3 վարժարան): Այս դպրոցներից 54-ը գտնվում է ՀՀ մարզերում, իսկ մեկը՝ Ստեփանակերտում:

Արարատյան բակալավրիատի անդամակցության դիմում-հայտ ներկայացրած 55 դպրոցների դիմում-հայտերի ուսումնասիրության արդյունքում դպրոցները բաժանվել են ըստ թեկնածուության փուլի մեկնարկային տարվա: Դպրոցներից մի քանիսին առաջարկվել են համագործակցության այլ ուղիներ:

Առաջին խմբում ներառվել են այն դպրոցները, որոնք, ըստ կանխատեսումների, 2018 թվականից սկսած, կարող են հավաստագրվել որպես Արարատյան բակալավրիատի դպրոց և ներդնել ծրագիրը ինչպես մեկ դասարանում, այնպես էլ ողջ դպրոցում ցանկության դեպքում: Այդ դպրոցների թիվը 21-ն է: Իսկ երկրորդ փուլում ներառվել են այն դպրոցները, որոնք, ըստ կանխատեսումների, որպես Արարատյան բակալավրիատի դպրոց կարող են հավաստագրվել 2018 թվականից սկսած: